

Որոշել՝ երբ գործէ արձակել մատակարարը

Որպէս գործատէր դուք իրաւունք ունիք որևիցէ պատճառով ձեր մատակարարը գործէ արձակելու, բայց այդ որոշումը գործադրելէ առաջ պէտք է ուշադիր մտածել:



Արդեօ՞ք հարցը կարելի է լուծել:

Մէկուն դժուար է ըսել, որ դուք այլևս պէտք չունիք անոր ծառայութիւններուն: Ձեր մատակարարին հետ յառաջացած մանր խնդիրներուն մասին փորձեցէք լուծում գտնել նախքան զինք գործէ արձակելու որոշումը առնելը:

Ձեր մտահոգութիւնները հաղորդէք ձեր մատակարարին:

Անմիջապէս որ հարցը նկատէք փորձեցէք տեղեկացնել ձեր մատակարարին: Լաւագոյնը կ'ըլլայ, որ չձգէք, որ խնդիրները կուտակուին, բայց ըլլալու պարագային՝ կազմեցէք ձեր դժգոհութեան պատճառներէն ցանկ մը և որոշեցէք, թէ ինչը պէտք է փոխուի, որպէսզի պահէք մատակարարը: Բաց զրոյց մը ունեցէք ձեր մատակարարին հետ և աշխատանքներու իր կատարումին մէջ բարելաւումներ ունենալու նպատակով համաձայնութիւններու յանգէք:

Յիշեցէք, որ հաղորդակցիլը երկկողմ ճամբայ է: Ձգեցէք, որ ձեր մատակարարը հարցումներ հարցնէ, և անոր մտահոգութիւններուն և մտածումներուն հանդէպ բաց-միտք եղէք:

Եթէ դուք հանգիստ չէք զգար այդ զրոյցը մինակ վարելու՝ խնդեցէք բարեկամ մը կամ ընտանիքի անդամ մը ներկայ ըլլալու՝ ձեզի նեցուկ կանգնելու համար:

Եթէ ձեր մատակարարը չուզեր ինքզինք բարելաւել:

Եթէ ձեր մատակարարը չբարելաւէ իր աշխատանքը, ժամանակն է, որ իր գործին վերջ տաք: Եթէ կարելի է նախընտրելի է ձեր մատակարարին զգուշացնէք երկու շաբաթ առաջ: Այսպիսով ան ժամանակ կ'ունենայ նոր գործ փնտռելու և ձեզի ալ՝ նոր մատակարար գտնելու:



Անմիջապես վերջ տուեք վտանգալոր մատակարարի մը աշխատանքին:

Եթէ ձեր մատակարարը ձեզի հետ կը վարուի ձեզի շահագործելով կամ սպառնալով, դուք պէտք է հեռաձայնէք 911 և անմիջապես գործէ արձակէք զինք: Անէնակարելորդ ձեր անձնական ապահովութիւնն է: Եթէ ատիկա ընելու համար դուք օգնութեան պէտք ունիք, հեռաձայնեցէք ձեր քաունթիի IHSS-ի գրասենեակը, բարեկամներու և ընտանիքի անդամներու, որպէսզի օգնեն ձեզի:

Ձեր մատակարարը գործէ արձակելու պատճառներէն կրնան ըլլալ.

- Ձեր խնամքի պէտքերը չբաւարարելը
- Ձեր անձնական դրամը կամ ունեցուածքը գողնալը
- Յաճախ գործի ուշանալը կամ բնաւ գործի չգալը
- Ձեր սեփական ապրանքները առանց արտօնութեան գործածելը



Եթէ անմիջապես մատակարարի պէտք ունիք

Եթէ դուք ստիպուած ըլլաք առանց նախազգուշացումի գործէ արձակել ձեր մատակարարը, արագ մը նոր անձ գտնելու քանի մը միջոց ունիք.

- Կապ հաստատէք ձեր Հանրային Իշխանութեան հետ՝ խնդրելով գործի պատրաստ մատակարարներու ցանկ մը:
- Խնդրեցէք ընտանիքի անդամ մը կամ բարեկամ մը, որ կարճ ժամանակի մը համար օգնէ ձեզի (յիշեցէք, որ բոլոր մատակարարները պէտք է մատնահետք տան եւ քրեական անցեալի ստուգում անցընեն, որպէսզի կարենան IHSS-էն վճարում ստանալ):

Եթէ մատակարարներ փոխէք, անմիջապես կապ պահեցէք ձեր քաունթիի IHSS-ի գրասենեակին հետ: